ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 30 >> սեպտեմբերի 2013թ. N 87 - Ա

ք. Արմավիր

## ԱՐԱՅԻԿ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի առաջին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի առաջին տեղակալի 2013 թվականի սեպտեմբերի 26-ի N 4/4.1-1/14149-13 գրությունը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետի քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը.

*կ ա ր գ ա դ ր ու մ   ե մ՝*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Արայիկ Հակոբյանին 2013 թվականի հոկտեմբերի 7-ից հոկտեմբերի 11-ը ներառյալ գործուղել ք. Երևան՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության Ուսուցման կենտրոնում կազմակերպվող <<Ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստում>> 5 օրյա դասընթացին մասնակցելու նպատակով:
2. Արայիկ Հակոբյանի վերապատրաստման ժամանակահատվածում աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետի պարտականությունների կատարումը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ Վիգեն Խաչատրյանին:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ՝ Վ.Մկրտչյան) սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարում:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հոկտեմբերի 5-ից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ